ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ 50 ՏԱՐՈՒՄ

Ճիշտ 50 տարի առաջ, 1958-ին Երևանում, Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց Արվեստի ինստիտուտը՝ գիտական այն հաստատությունը, որտեղ այսօր կատարվող ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր ճյուղերի պատմության և տեսության հիմնախնդիրները:

Մինչ այդ՝ սկսած 1944-ից, Հայաստանի ԳԱ համակարգում գործել է երաժշտության պատմության և տեսության սեկտորը, իսկ Պատմության ինստիտուտին կից՝ արվեստի պատմության բաժինը: 1948-ի դեկտեմբերի 29-ին նույն համակարգում կազմակերպվում է արվեստի պատմության և տեսության սեկտորը, որի վարիչներ են եղել Ք. Քուշնարյանը, Մ. Սարյանը, Վ. Հարությունյանը, Ռ. Զարյանը: Մեկ տասնամյակ անց սեկտորի հիման վրա ստեղծվեց Արվեստի ինստիտուտը:

Իր գոյության առաջին իսկ տարիներից ինստիտուտը դարձավ հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնը՝ առաջատարի ջահն իր ձեռքին պահելով հետագա հիսուն տարիների ընթացքում: Ինստիտուտի գիտական ավանդույթների սկիզբը դրեցին նրա հիմնադիր տնօրեն Ռ. Զարյանը և վերջինիս շուրջ համախմբված անվանի գիտնականներ Ա. Սահինյանը, Ռ. Դրամբյանը, Ա. Քոչարյանը, Մ. Մուրադյանը և ուրիշներ:

Արվեստի պատմության և տեսության սեկտորը, իսկ հետագայում՝ Արվեստի ինստիտուտը, գործում էր առաջին հերթին իբրև հայ արվեստի պատմական զարգացման ուսումնասիրման կենտրոն, որ կոչված էր հավաքագրել այդ բնագավառում հանրապետության առաջատար գիտական ուժերը՝ մեր գեղարվեստական հարուստ, հսկայածավալ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրման, գիտական իմաստավորման ու արժեքավորման, ինչպես նաև քարոզման նպատակներով: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ էր ակադեմիական գիտության մեջ ներմուծել գեղարվեստական ընթացիկ կյանքի նշանակալից երևույթները:

Ստեղծման պահին ինստիտուտում գործել են ճարտարապետության (վարիչ՝ Ա. Սահինյան), կերպարվեստի (վարիչ՝ Ռ. Դրամբյան), թատրոնի (վարիչ՝ Ռ. Զարյան) և երաժշտության (վարիչ՝ Մ. Մուրադյան) բաժինները: 1965-ին երաժշտության բաժինը տրոհվեց երաժշտության (վարիչ՝ Գ. Գյոդակյան) և ժողովրդական երաժշտության (վարիչ՝ Մ. Մուրադյան) բաժինների: 1969-ին սկսեց գործել կիրառական արվեստի բաժինը (վարիչ՝ Ռ. Դրամբյան), իսկ 1979-ին՝ կինոյի և հեռուստատեսության բաժինը (վարիչ՝ Կ. Քալանթար):

1976-ից Արվեստի ինստիտուտում գործում էր արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդը, որի յուրաքանչյուր «իրավահաջորդը» դարձավ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշմամբ 1995-ին ստեղծված խորհուրդը՝ միակը հանրապե-

տությունում, որ գիտական աստիճաններ է շնորհում արվեստագիտության բոլոր բնագավառներում:

Ինստիտուտի գիտական գործունեության բնույթն ու ուղղվածությունը պայմանավորվեցին առաջին հերթին նրա հիմնադիրների՝ լայն հայացքների և գեղարվեստական նուրբ ճաշակի տեր մարդկանց հեղինակությամբ ու անհատական վառ նկարագրով: Նրանք դժվարությունների և փորձությունների միջով տարան հայագիտության, հայկական հումանիտար գիտության ու գեղարվեստական մտքի լավագույն ավանդույթները՝ զուգորդելով բարձր սկզբունքայնությունը և գիտական բարեխղճությունը: Օրինակ ծառայելով իրենց կրտսեր գործընկերների համար՝ նրանք մեծապես պայմանավորեցին ինստիտուտում տիրող ստեղծագործական առողջ մթնոլորտը:

Անցած հիսուն տարիների ընթացքում ինստիտուտը շոշափելի արդյունքների հասավ ճարտարապետության պատմության ասպարեզում: Դեռևս 1930-ական թվականներից ու, հատկապես, Հայրենական մեծ պատերազմից հետո Հայաստանում նոր թափ առան ճարտարապետական հուշարձանների պեղումները: Ճարտարապետության ասպարեզում կարևորագույն ներդրումներից է Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման գիտական հիմնավորումը, որը հավանության արժանացավ 1968-ին: Նախագծի հեղինակ Ա. Սահինյանի ղեկավարությամբ իրականացվեցին տաճարի վերաշինման աշխատանքները[1]: Իր կատարած գիտական սխրանքի համար Սահինյանն 1975-ին արժանացավ Հայաստանի պետական մրցանակի:

Ինստիտուտի ճարտարապետության պատմաբանների կարևոր խնդիրներից էր ճարտարապետության պատմությունն ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը: Այս ուղղությամբ առաջին փորձն էր «Ակնարկ հայկական ճարտարապետության պատմության» (Երևան, 1964) կոլեկտիվ աշխատությունը, որի լրացված և վերափոխված ռուսերեն տարբերակը լույս տեսավ 1978-ին[2]: Հանգրվանային հաջորդ աշխատանքը հայ ճարտարապետական գիտության անցած տասնամյակների ձեռքբերումներն ամբողջացնող «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակն է, որի 3 հատորներն արդեն դրվել են ընթերցողի սեղանին[3]:

Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության բնագավառում էական նշանակություն ունեցան Ա. Սահինյանի «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» աշխատությունը (Երևան, 1955) և Էջմիածնի տաճարում նույն հեղինակի պեղումները, որոնց հիման վրա գրված հոդվածները նոր լույս սփռեցին այդ հնագույն կառույցի շինարարական կյանքի վրա: Զվարթնոցի, Բագարանի, Դմանիսի, Կարենիսի, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների և մեմորիալ կոթողների ուսումնասիրմանը նվիրվեցին Ստ. Մնացական-

---

[1] *Տե՛ս* Ա. Սահինյան. *Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983:*

[2] *Տե՛ս* Очерки по истории архитектуры древней и средневековой Армении. Ереван, 1978.

[3] *Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, հ. 1, 1996, հ. 2, 2002, հ. 3, 2004:*

յանի, Ա. Զարյանի, Մ. Հասրաթյանի, Վ. Գրիգորյանի, Ս. Մնացականյանի մենագրությունները[4]*:*

Հայկական ճարտարապետության զարգացման հաջորդ շրջանին էին վերաբերում Ստ. Մնացականյանի “Архитектура армянских притворов” (Ереван, 1952) *և «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» (Երևան, 1960) արժեքավոր գրքերը: Միջնադարյան ճարտարապետության հետ սերտորեն կապված հայկական քանդակն է դիտարկվում նույն հեղինակի «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX–XIV դարերում» (Երևան, 1976) և «Վարպետաց վարպետներ» (Երևան, 1982) աշխատություններում, իսկ ճարտարապետության և քանդակագործության համադրման պրոբլեմները հատուկ տեղ գտան նրա «Աղթամար» (Երևան, 1983) մենագրության մեջ:*

Մ. Հասրաթյանի «Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները» (Երևան, 1973) աշխատության մեջ վեր հանված ճարտարապետական հարուստ ժառանգությունը հիմք հանդիսացավ ուշ միջնադարի հայ շինարվեստը որպես անկումնային երևույթ ներկայացնող տեսակետները հերքելու համար:

Ճարտարապետության պատմաբանների ուշադրությանն արժանացավ առանձին տարածաշրջանների (այդ թվում՝ Արցախի) ճարտարապետական դպրոցների և հուշարձանների ուսումնասիրությունը[5]*:*

Ուշ միջնադարյան ճարտարապետության անմիջական շարունակությունն է XIX դարի և XX դարասկզբի հայ ճարտարապետական մշակույթը, որը նոր էջ է բացում երկրի ճարտարապետական արվեստում: Դրա ուսումնասիրմանն են նվիրված Ն. Պապուխյանի աշխատանքները, որտեղ հեղինակի ուշադրության կենտրոնում են հայկական և հայաբնակ քաղաքների կառուցապատման ու քաղաքաշինության հարցերը, ինչպես նաև ժողովրդական ճարտարապետության զարգացման փուլերը[6]*:*

Խորհրդահայ ճարտարապետության ուսումնասիրման բնագավառում զգալի է Լ. Բաբայանի, Կ. Հովհաննիսյանի, Վ. Հարությունյանի, Լ. Զորյանի, Մ. Հասրաթյանի, Լ. Դոլուխանյանի, Կ. Բալյանի վաստակը: Հայ ճարտարապետության ականավոր ներկայացուցիչներին՝ Թ. Թորամանյանին, Ա. Թամանյանին, Ռ. Իսրայելյանին և այլոց՝ ոճական տարբեր ուղղություններին, քաղաքաշինությանը, նոր շինանյու-

---

[4] *Տե՛ս, օրինակ, Ստ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, Ա. Զ ա ր յ ա ն. Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986,* С т. М н а ц а к а н я н ; Крестовокупольные композиции Армении и Византии V–VII веков. Ереван, 1989, М. А с р а т я н. Армянская архитектура раннего христианства. М., 2000.

[5] *Տե՛ս, օրինակ, Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն. Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, 1987, Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն. Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, Ա. Ղ ո ւ լ յ ա ն. Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001:*

[6] *Տե՛ս, օրինակ, Ն. Պ ա պ ու խ յ ա ն. Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972:*

թերի և շինարարական առաջավոր մեթոդների որոնմանը նվիրված աշխատություններում ընդհանրացվեց խորհրդահայ ճարտարապետության հարուստ փորձը[7]*:*

Նշանակալից էին Արվեստի ինստիտուտի և Միլանի հայկական ճարտարապետության ուսումնասիրության հետազոտական կենտրոնի համագործակցության շնորհիվ լույս տեսնող հայկական ճարտարապետության առանձին հուշարձաններին վերաբերող պրակները: 1967-ին սկիզբ առած այդ բեղմնավոր համագործակցության շնորհիվ տարիների ընթացքում Միլանում իտալերեն, հայերեն և անգլերեն հրատարակվեցին «Վավերագրեր հայ ճարտարապետության» մատենաշարի 23 պրակները՝ նվիրված Հաղպատին, հայկական խաչքարերին, Սանահինին, Ամբերդին, Գոշավանքին, Գանձասարին, Հաղարծինին, Գեղարդին, Աղթամարին, Կեչառիսին և այլն, որոնցում ներկայացված են Հայաստանի Հանրապետության, Թուրքիայի և Իրանի տարածքներում գտնվող հայ ճարտարապետական նշանավոր համալիրները[8]*:*

Միլանի կենտրոնի և Արվեստի ինստիտուտի համագործակցության կարևորագույն արդյունքներից էր Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների կազմակերպումը: 1975-ին Իտալիայում հրավիրված առաջին սիմպոզիումին մասնակցեցին աշխարհի տարբեր երկրների շուրջ 60 ճանաչված գիտնականներ: Զեկուցումները հագեցած էին փաստական հարուստ նյութով, նոր հարցադրումներով, ունեին գիտական բարձր մակարդակ: Երկրորդ (1978) և չորրորդ (1985) սիմպոզիումները կայացան Երևանում, երրորդը (1981) և հինգերորդը (1988)՝ վերստին Իտալիայում: Սիմպոզիումների զեկուցումները տպագրվեցին առանձին ժողովածու-

---

[7] *Տե՛ս, օրինակ,* В. А р у т ю н я н, К. О г а н е с я н. Архитектура Советской Армении. Краткий очерк. Ереван, 1955; С т. М н а ц а к а н я н, Н. С т е п а н я н. Памятники архитектуры в Советской Армении. Л., 1970; В. А р у т ю н я н, М. А с р а т я н, А. М е л и к я н. Архитектура Советской Армении. М., 1972; *Լ. Զ ո ր յ ա ն. Թամանյան, Երևան, 1978,* Л. Д о л у х а н я н. Архитектура Советской Армении. 20-е годы. Ереван, 1980; М. А с р а т я н. Очерк армянской архитектуры. М., 1985, Л. Б а б а я н, Ю. Я р а л о в. Рафаел Исраелян. М., 1986; К. Б а л ь я н. Современная национальная архитектура Армении. Ереван, 1987, *Ն. Պ ա պ ու խ յ ա ն. Թորոս Թորամանյան. կյանքը և գործը, Երևան, 2005, Լ. Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. Ռաֆայել Իսրայելյան, Երևան, 2008:*

[8] *Տե՛ս* S t. M n a t s a k a n i a n, A. A l p a g o-N o v e l l o. Haghbat. Milan, 1968; L. A z a r i a n, A. M a n o u k i a n. Khatchkar. Milan, 1969; O. G h a l p a k h t c h i a n, A. A l p a g o - N o v e l l o. Sanahin. Milan, 1970; W. K l e i s s, H. S e i h o u n, S.Thadeivank. Milan, 1971; N. T o k a r s k i j, A. A l p a g o-N o v e l l o. Amberd. Milan, 1972; A. S a h i n i a n, A. M a n o u k i a n, H. V a h r a m i a n. G(h)eghard. Milan, 1972; H. V a h r a m i a n, S. D e r-N e r s e s s i a n. Aghtamar. Milan, 1974; A. K. Z a r i a n, H. V a h r a m i a n. Goshavank. Milan, 1974; P. P a b o u d j i a n, A. A l p a g o-N o v e l l o. Ererouk. Milan, 1977; H. H o f r i c h t e r, G. U l u h o g i a n. S. Stephanos. Milan, 1980; M. H a s r a t i a n, A. A l p a g o-N o v e l l o. Ketcharis. Venezia, 1982; P. C u n e o, A. K. Z a r i a n, G. U l u h o g i a n, H. V a h r a m i a n, N. T h i e r r y, J.-M. T h i e r r y. Ani. Milan, 1984; A. K. Z a r i a n, A. M a - n o u k i a n. Haghartzin, Milan, 1984; A. A l p a g o-N o v e l l o, G. I e n i. Amaghu Noravank. Milan, 1985; A. J a k o b s o n, K. G h a f a d a r i a n, G. C u r a t o l a. Kasakhi vanker. Milan, 1986; F. G a n d o l f o, A. K. Z a r i a n. Ptghni-Arudch. Milan, 1986; B. U l u b a b i a n, M. H a s r a t i a n. Gandzasar. Venezia, 1987; S t. M n a t s a k a n i a n. Sevan. Milan, 1987; M. A. L a l a C o m n e n o, P. C u n e o, S. M a n o u k i a n. Gharabagh. Milan, 1988; A. A l p a g o-N o v e l l o. Sorhul. Milan, 1989; A. H a k h n a z a r i a n, V. M e h r a b i a n. Nor-Djulfa. Venezia, 1992; V. H a r o u t y u n i a n, F. G a n d o l f o. Makaravank. Venezia, 1994; A. K. Z a r i a n, A. A. Z a r i a n, A. T e r - M i n a s s i a n. Vagharshapat. Venezia, 1998.

ներով, որոնք զգալի ավանդ եղան ոչ միայն հայ ճարտարապետության, այլև հայկական արվեստի ուսումնասիրության բնագավառում[9]:

Այսպիսով՝ անցած հիսուն տարիների ընթացքում հիմնականում ուսումնասիրվել է Հայաստանի հին, միջնադարյան և նոր ժամանակների ճարտարապետության պատմությունը:

Այսօր վիթխարի փաստական նյութ է կուտակվել հայկական միջնադարյան հուշարձանների վերաբերյալ: Օրվա հրամայականն է այդ նյութի համակարգումը և հրատարակումը, որը մեծ խթան կդառնա Հայաստանի շինարարական արվեստի հարուստ ժառանգության հետագա՝ գիտական առավել խոր ուսումնասիրության համար: Եթե մինչ օրս նկատելի հաջողություններ են գրանցվել հայ ճարտարապետության պատմության հետազոտության գործում, ապա եզակի են տեսական բնույթի աշխատանքները, մինչդեռ դրանց կարևորությունն ակնհայտ է: Սակավաթիվ են հայկական ճարտարապետական առնչություններին (հայ-բյուզանդական, հայ-վրացական, հայ-ասորական) և իսլամական արվեստի հետ ունեցած փոխհարաբերություններին նվիրված հիմնարար ուսումնասիրությունները: Անբավարար է ուսումնասիրված արվեստի համադրման՝ սինթեզի խնդիրը, հայկական վաղ քրիստոնեական և Հայաստանի նախաքրիստոնեական ճարտարապետության կապի հիմնահարցը: Անհրաժեշտ է որակյալ կադրեր պատրաստել հելլենիստական և ուրարտական շրջանների ճարտարապետության բնագավառում:

Ազգային կերպարվեստը նույնպես գրավել է հայ և օտարազգի գիտնականների ուշադրությունը: Հարուստ պատմություն և ժամանակակից նվաճումներ ունեցող մեր մշակույթի այդ բնագավառի կանոնավոր ուսումնասիրությունը ևս լայն ծավալ ստացավ վերջին 50 տարիների ընթացքում:

Հայ ժամանակակից արվեստագիտության սկզբնավորումը սերտորեն կապված է վաստակաշատ արվեստաբաններ Ռ. Դրամբյանի և Լ. Դուռնովոյի անունների հետ: Խորհրդահայ կերպարվեստագիտության առաջնահերթ խնդիրներից էր անցյալի հայ կերպարվեստի ուսումնասիրության հարցը: Հենց Դուռնովոն հաստատեց հայկական վաղ միջնադարյան որմնանկարչության գոյությունն ու նշանակությունը վաղ քրիստոնեական արվեստում: Ռ. Դրամբյանի հետ նա առաջինն էր, որ միջնադարյան ձեռագրերի մանրանկարչական արվեստը դասակարգեց ըստ դպրոցների, բնորոշեց դրանց առանձնահատկությունները, մանրանկարիչների ցանկը համալրեց նոր անուններով[10]: Կերպարվեստագիտության մեջ նրա ներմուծած միջնադարյան նկարչության ուսումնասիրման կարևոր ավանդները շարունակեցին Լ. Ազարյանը, Ա. Ավետիսյանը, Ն. Քոթանջյանը, Ի. Դրամբյանը, Վ. Ղազարյանը, Լ. Զա-

---

[9] *Տե՛ս* Atti del Primo simposio internazionale di Arte Armena. San Lazzaro – Venezia, 1978, Второй международный симпозиум по армянскому искусству. Сборник докладов. Т. 1–4, Ереван, 1981; Atti del Terzo simposio internazionale di Arte Armena. San Lazzaro – Venezia, 1984; Четвертый международный симпозиум по армянскому искусству. Сборник тезисов докладов. Ереван, 1985; Atti del Quinto simposio internazionale di Arte Armena. San Lazzaro – Venezia, 1992.

[10] *Տե՛ս, օրինակ,* Р. Д р а м п я н. Армянская миниатюра и книжное искусство.– В сб.: Очерки по истории искусства Армении. М.–Л., 1939,с.3–27; Л. Д у р н о в а. Древние фрески Армении. – Там же, с. 28 – 32; *ն ո ւ յ ն ի՝* Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957.

քարյանը, Ս. Մանուկյանը և ուրիշներ[11]*: Հայկական վաղ միջնադարյան պատկերաքանդակի ուսումնասիրության գործում շոշափելի է Լ. Ազարյանի վաստակը*[12]*:*

Ստեղծվում են Կիլիկիայի, Գլաձորի, Վասպուրականի, Ղրիմի, Արցախի մանրանկարչական դպրոցներին նվիրված մենագրություններ[13]*, ընդլայնվումեն միջնադարյան հայ արվեստի ուսումնասիրության շրջանակները, լուսաբանվում են նշանավոր մանրանկարիչ-ծաղկողների՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու ստեղծագործական ժառանգության յուրահատկությունները*[14]*, գիտական ուսումնասիրության նյութ են դառնում հայկական զարդանկարչությունը, որմնանկարչությունը, քանդակագործությունը, խաչքարերը, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ճյուղերի համադրման հարցերը:*

Վերջին շրջանում հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են նաև տեսական խնդիրները. գույնի և հորինվածքի, սյուժետային նկարների պատկերագրական հիմքերի բացահայտումը, խորանների մեկնությունները Ն. Քոթանջյանի և Վ. Ղազարյանի աշխատություններում[15]*: Մ. Ղազարյանի գրքերում ու հոդվածներում առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվում է XVII–XVIII դարերի հայ կերպարվեստը՝ բնորոշվելով որպես միջնադարը նոր շրջանի հետ կապող անցումային կարևոր օղակ*[16]*:*

Ինստիտուտի մասնագետների ուշադրության ոլորտում են նոր և նորագույն հայ կերպարվեստի առնչություններն այլ ժողովուրդների արվեստի հետ, ինչպես և առանձին խոշոր վարպետների ստեղծագործական կյանքի հանգամանքները: Այդ բնագավառում հատկապես մեծ է Ռ. Դրամբյանի, Մ. Սարգսյանի, Մ. Ղազարյանի, Մ. Այվազյանի, Ն. Ստեփանյանի, Վ. Մաթևոսյանի վաստակը[17]*: Նրանց գործը հա-*

---

[11] *Տե՛ս, օրինակ,* И. Д р а м п я н. Фрески Кобайра. Ереван, 1979; *Վ. Ղ а զ а р յ а ն. Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ – XIV դարի սկիզբ), Երևան, 1984,* Матенадаран. Т. 1: Армянская рукописная книга VI–XIV вв. М., 1991; *Ն. Ք о թ а ն ջ յ а ն. Էջմիածնի ավետարանը, Երևան, 2000, Ի. Դ р а մ բ յ а ն. Հեթում Բ արքայի ճաշոցը, Երևան, 2004, Ն. Ք о թ а ն ջ յ а ն. Ծղրութի ավետարանը, Երևան, 2006:*

[12] *Տե՛ս Լ. Ա զ а р յ а ն. Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975:*

[13] *Տե՛ս Լ. Ա զ а р յ а ն. Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIIIդդ., Երևան, 1964, Ա. Ա վ е տ ի с յ а ն, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971,* Л. З а к а р я н. Из истории Васпураканской миниатюры. Ереван, *1980.*

[14] *Տե՛ս Վ. Ղ а զ а р յ а ն. Սարգիս Պիծակ, Երևան, 1980,* И. Д р а м п я н. Торос Рослин. Ереван, 2000; *ն о ւ յ ն ի՝* Акоп Джугаеци. Ереван, 2008.

[15] *Տե՛ս* Н. К о т а н д ж я н. Цвет в раннесредневековой армянской живописи. Ереван, 1978; *Վ. Ղ а զ а р յ а ն. Մեկնութիւնք խորանաց, Ս. Էջմիածին, 2004:*

[16] *Տե՛ս* М. К а з а р я н. Художники Овнатаняны. М., 1968; *Մ. Ղ а զ а р յ а ն. Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում. գեղանկարչություն, Երևան, 1974:*

[17] *Տե՛ս, օրինակ, Մ. Ս а р գ с յ а ն. Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը XIX-XX դարերում, Երևան, 1953,* Р. Д р а м п я н. Егише Татевосян. М., 1957; *Ն о ւ յ ն ի՝* Акоп Коджоян. М., 1960; *ն о ւ յ ն ի՝ Մարտիրոս Սարյան, Երևան, 1960, Մ. Ղ а զ а р յ а ն. Վարդգես Սուրենյանց, Երևան, 1960, Վ. Մ а թ և о с յ а ն. Սեդրակ Առաքելյան, Երևան, 1963,* Р. Д р а м п я н. Александр Бажбеук-Меликян. М., 1971; *Ն о ւ յ ն ի՝* Акоп Гюрджян. Ереван, 1973; *Վ. Մ а թ և о с յ а ն. Մարտիրոս Սարյան, Երևան, 1975, Մ. Ս а р գ с յ а ն. Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, Երևան, 1979,* Р. Д р а м п я н. Государственная картинная галерея Армении. М., 1982; *Մ.*

ջողությամբ շարունակում են ինստիտուտի ներկայիս տնօրեն Ա. Աղասյանը, Մ. Ստեփանյանը, Ա. Ներսիսյանը, Ա. Ավագյանը և ուրիշներ[18]*:*

Հայ կերպարվեստի պատմական զարգացումն ամբողջացնող կամ դրա առանձին խոշոր շրջափուլերին, ճյուղերին ու ժանրերին են նվիրված Լ. Դուռնովոյի, Մ. Սարգսյանի, Մ. Ղազարյանի, Մ. Այվազյանի, Ն. Ստեփանյանի, Ա. Աղասյանի մենագրությունները[19]*, ինչպես նաև* “Очерки по истории армянского изобразительного искусства” (Ереван, 1979) *կոլեկտիվ աշխատությունը:*

Արվեստի ինստիտուտում կարևորվել է դեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրությունը, որի ինքնատիպ բնագավառներից մեկը՝ դաջարվեստը, գեղարվեստական դասակարգման ենթարկեց Լ. Դուռնովոն[20]*:*

Հայկական գործվածքների ուսումնասիրման առումով անգնահատելի է Ս. Դավթյանի վաստակը. նրա երեք կարևոր աշխատությունները նվիրված են հայկական ժանյակին, կարպետին ու ասեղնագործությանը[21]*: Ս. Դավթյանն առաջինն էր, ով հայկական ասեղնագործությունը դասակարգեց ըստ տեխնոլոգիական հնարների և ուրվագծեց հայկական ասեղնագործության հիմնական դպրոցները, ամփոփ ներկայացրեց հայկական կարպետի տեսակները, արժեքավորեց ժանյակի արվեստը:*

Ընդհանրացնող բնույթի ուսումնասիրություններում ներկայացվել է ազգային դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման ամբողջական պատկերը, բացահայտվել է տարբեր ժանրերի փոխադարձ կապը, մատնանշվել զարդային համակարգի միասնականությունն ու ինքնատիպությունը: Միջնադարյան կիրառական արվեստի ամբողջական պատմությունը ներկայացնելու փորձեր են Ս. Դավթյանի «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» (Երևան, 1981) աշխատությունը և Ն. Ստեփանյանի ու Ա. Զաքմաքչյանի համատեղ կազմած «Декоративное искусство средневековой Армении» (Л., 1971) *պատկերագիրքը: Եթե անցյալում ժողովրդական արվեստի այդ ոլորտն ուշադրության էր արժանանում սոսկ հնագիտական կամ ազգագրական տեսակետներից, ապա Լ. Դուռնովոյի ու Ս. Դավթյանի վերոհիշյալ աշխատանքներում, ինչպես նաև Մ. Ղազարյանի, Ն. Ստեփանյանի, Ի. Դրամբյանի, Զ. Թառայանի, Մ. Ստեփանյանի, Վ. Թա-*

Սարգսյան. Մեծ ծովանկարչի կյանքը, Երևան, 1990, նույնի՝ Երեք կիսադեմ, Երևան, 2002, Վ. Մաթևոսյան. Հակոբ Կոջոյան, Երևան, 2003, Р. Дрампян. Акоп Овнатанян. Ереван, 2006.

[18] *Տե՛ս* М. Степанян. Рубен Шавердян. М., 1982; *Ա. Աղասյան. Հայաստանի երիտասարդ նկարիչները, Երևան, 1987,* А. Агасян. Мартирос Сарьян. Раннее творчество. Ереван, 1992; А. Агасян. Ерванд Кочар. Ереван, 1999; А. Авакян. Из истории художественной жизни Армении: 1920–1932. Ереван, 2002; А. Нерсисян. Человек и природа. Армянская живопись второй половины XX века. Ереван, 2004*; Ա. Ավագյան. Նկարիչ Տաճատ Խաչվանքյան, Երևան, 2007:*

[19] *Տե՛ս* Л. Дурново. Очерки изобразительного искусства средневековой Армении. М., 1979; *Մ. Սարգսյան. Սովետական Հայաստանի գրաֆիկան, Երևան, 1961,* Т. Измайлова, М. Айвазян. Искусство Армении. М., 1962; М. Айвазян. Пейзаж в армянской советской живописи. Ереван, 1978; Н. Степанян. Очерк изобразительного искусства Армении. М., 1985; Н. Степанян. Искусство Армении. Черты историко-художественного развития. М., 2007; *Ա. Աղասյան. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում, Երևան, 2008:*

[20] *Տե՛ս* Л. Дурново. Армянская набойка. М., 1953.

[21] *Տե՛ս Ս. Դավթյան. Հայկական ժանյակ, Երևան, 1966, նույնի՝ Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, նույնի՝ Հայկական կարպետ, Երևան, 1975:*

թիկյանի գրքերում ու հոդվածներում շեշտը դրվում է դեկորատիվ-կիրառական արվեստի առանձին բնագավառներին առնչվող գեղարվեստական խնդիրների վրա[22]*:*

Սկզբնական շրջանում՝ 1958-ից 1963 թվականները, ինստիտուտի կիրառական արվեստի բաժնին կից գործել է խեցեգործական փորձարարական արվեստանոցը, որի աշխատակիցներն էին հայ առաջատար խեցեգործներ Ռ. Շահվերդյանը, Հ. Բդեյանը, Ա. Չաքմաքչյանը և ուրիշներ, ովքեր ոչ միայն ստեղծում էին գեղարվեստական խեցեգործության էքսպերիմենտալ նմուշներ, այլև զբաղվում հայկական կերամիկայի հարուստ ավանդույթների ու մոռացված տեխնոլոգիաների ուսումնասիրությամբ: Ցավոք, ժամանակի ընթացքում կիրառական արվեստի բաժինը փակվեց և այսօր ինստիտուտում մնացել են այդ ասպարեզի ընդամենը երկու մասնագետ: Մինչդեռ դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր բնագավառները գիտնական բանիմաց մասնագետների խիստ կարիք ունեն ոչ միայն Արվեստի ինստիտուտում, այլև հանրապետության գիտակրթական և մշակութային այլ կենտրոններում: Ուստի ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է որակյալ կադրեր պատրաստել և Արվեստի ինստիտուտում վերականգնել դեկորատիվ-կիրառական արվեստի բաժինը:

Ինստիտուտի կերպարվեստագետների առջև վաղուց ծառացած խնդիրներից է հայ կերպարվեստի ամբողջական պատմության շարադրումը՝ ակադեմիական բազմահատոր հրատարակությամբ, առավել ևս, որ այսօր առկա են դրա համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները:

Հայ երաժշտագիտության զարգացումն ընթացել է հիմնական երեք ուղիով. հայ երաժշտության պատմություն և տեսություն, հայ դասականների ստեղծագործական ժառանգության տպագրության նախապատրաստում և հրատարակում, երաժշտական ֆոլկլորագիտություն: Արվեստի ինստիտուտի երաժշտագետներն անցած հիսուն տարիներին զբաղվել են մի կողմից՝ հայ դասական և հոգևոր երաժշտության հարուստ ժառանգության, մյուս կողմից՝ ժամանակակից երաժշտական իրականության կանոնավոր ուսումնասիրությամբ:

Հայրենական երաժշտագիտական մտքի ակնառու ձեռքբերումներից են Ք. Քուշնարյանի “Вопросы истории и теории армянской монодической музыки” (Л., 1958) *աշխատությունը և Գ. Տիգրանովի* “Армянский музыкальный театр. Очерки и материалы” (Ереван, 1956–1988) *քառահատորը, որն 1979-ին արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:*

Հայ հին և միջնադարյան երաժշտության ուսումնասիրման մեջ արժեքավոր ներդրումներ են Ն. Թահմիզյանի աշխատությունները[23]*: Երաժշտական միջնադա-*

---

[22] *Տե՛ս, օրինակ,* З. Т а р а я н. Набойка в Армении. Ереван, 1978; М. К а з а р я н. Армянский ковер. М., 1985; *Մ. Ղ ա զ ա ր յ ա ն. Հայկական գորգ, Ֆինլանդիա, 1988, ն ո ւ յ ն ի՝ Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, Երևան, 1990, Վ. Թ ա թ ի կ յ ա ն. Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004:*

[23] *Տե՛ս* Н. Т а г м и з я н. Теория музыки в древней Армении. Ереван, 1977; *ն ո ւ յ ն ի՝ Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1982:*

բագիտության համար կարևոր նշանակություն ունեցան Ա. Արևշատյանի և Մ. Նավոյանի գիտական պրպտումները[24]: Ա. Քոչարյանի գիտահետազոտական գործունեության հիմնական ոլորտներից էր հայ աշուղական երգարվեստը[25]:

Հայ դասական երաժշտության տարբեր ժանրերի զարգացման պատմությանը, երաժշտական առնչություններին, ինչպես նաև Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Կոմիտասին, նոր և նորագույն ժամանակների հայ նշանավոր կոմպոզիտորներին են նվիրված Գ. Տիգրանովի, Մ. Մուրադյանի, Ն. Թահմիզյանի, Ռ. Աթայանի, Գ. Գյոդակյանի, Կ. Խուդաբաշյանի, Մ. Տեր-Սիմոնյանի, Մ. Ռուխկյանի, Ա. Գրիգորյանի, Ռ. Մազմանյանի, Լ. Երնջակյանի, Ա. Ասատրյանի և այլոց մենագրությունները[26]: Տեսական բնույթի աշխատություններից նշենք Կարինե Խուդաբաշյանի “Армянская музыка на пути от монодии к многоголосию” (Ереван, 1977) *աշխատությունը: Ընդհանուր առմամբ լուսաբանվել է հայ երաժշտության ու երաժշտական կյանքի առանձին շրջափուլերի, ինչպես և դրանց ամբողջական պատմությունը[27]:*

Արվեստի ինստիտուտի գիտական գերակա ուղղություններից է ազգային երաժշտական մշակույթի դասականների ստեղծագործական ժառանգության հրատարակության իրականացումը: Այդ ասպարեզում կատարվել է ծանրակշիռ ու հիմնարար աշխատանք: Ինստիտուտը հրատարակել է հայ սիմֆոնիկ երաժշտութ-

---

[24] *Տե՛ս* Ա. Ա ր և շ ա տ յ ա ն. *«Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, 1990,* Մ. Ն ա վ ո յ ա ն. *Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Երևան, 2001,* Ա. Ա ր և շ ա տ յ ա ն. *Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ (մենագրություն, քննական բնագրեր և աշխարհաբար թարգմանություն), Երևան, 2003:*

[25] *Տե՛ս* Ա. Ք ո չ ա ր յ ա ն. *Հայկական գուսանական երգեր, Երևան, 1976:*

[26] *Տե՛ս* Ռ. Ա թ ա յ ա ն, Մ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. *Արմեն Տիգրանյան: Կյանքը, երաժշտական-հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը, Երևան, 1955,* Գ. Գ յ ո դ ա կ յ ա ն. *Ռոմանոս Մելիքյան, Երևան, 1960,* А. Г р и г о р я н. Арно Бабаджанян. М., 1961; *Գ. Տ ի գ ր ա ն յ ա ն. Կոնստանդին Սարաջյան (կենսագրական ակնարկ), Երևան, 1961, Կ. Խ ո ւ դ ա բ ա շ յ ա ն. Գրիգոր Եղիազարյան, Երևան, 1966, Մ. Տ ե ր – Մ ի մ ո ն յ ա ն. Սարգիս Բարխուդարյան, Երևան, 1968,* М. Те р - С и м о н я н. Эдвард Мирзоян. М., 1969, *Գ. Գ յ ո դ ա կ յ ա ն. Տիգրան Չուխաջյանը և նրա «Արշակ երկրորդ» օպերան, Երևան, 1971, Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն. Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973,* М. Т е р - С и м о н я н. Камерно-инструментальная ансамблевая музыка Армении. Ереван, 1974; Р. М а з м а н я н. Никогайос Тигранян. Очерк жизни и творчества. Ереван, 1978; Г. Т и г р а н о в. Арам Ильич Хачатурян. Очерк жизни и творчества. Л., 1978; М. Р у х к я н. Армянская симфония. Исследовательские очерки. Ереван, 1980; *Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն. Մակար Եկմալյան: Կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, 1981,* А. Г р и г о р я н. Армянская камерно-вокальная музыка. Ереван, 1982; *Ն. Թ ա հ մ ի զ յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը. V-XVդդ., Երևան, 1985, Լ. Ե ր ն ջ ա կ յ ա ն. Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1991, Գ. Գ յ ո դ ա կ յ ա ն. Կոմիտաս, Երևան, 2000,* М. Р у х к я н. Авет Тертерян. Творчество и жизнь. Ереван, 2002; *Ա. Ա ս ա տ ր յ ա ն. «Արշակ Բ» հայոց անդրանիկ օպերան, Երևան, 2006, ն ո ւ յ ն ի՝ Հայաստանի պետական երգչախումբ, Երևան, 2007:*

[27] *Տե՛ս Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան, 1963,* Մ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. *Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970,* Ռ. Մ ա զ մ ա ն յ ա ն. *Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1960), Երևան, հ. 1, 1979, հ. 2, 1986,* Մ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. *Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դար և XX դարասկիզբ), Երևան, 1989,* Г. Г е о д а к я н. Пути формирования армянской музыкальной классики. Ереван, 2006; *Ռ. Մ ա զ մ ա ն յ ա ն. Հայ երաժշտական կյանքի տարեգրություն (1901-1910), Երևան, 2006:*

յան հիմնադիր Ա. Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուն 11 հատորով, որը տպագրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1939 թ. նոյեմբերի 23-ի հրամանագրի հիման վրա: Առաջին հատորը լույս է տեսել 1943-ին, իսկ վերջինը՝ 1985-ին:

1949 թ. սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակի առիթով, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը որոշում է ընդունել Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության մասին: Առաջին հատորը՝ Մարտիրոս Սարյանի ձևավորած կազմակալով (форзац)*, լույս է տեսել 1960-ին: Վերջերս լույս տեսած 14-րդ հատորով ավարտվեց Կոմիտասյան ժողովածուի հրատարակումը, որի շնորհիվ գործնականում հնարավոր դարձավ Կոմիտասի ստեղծագործությունների կատարումն ու հետագա խորացված ուսումնասիրումը: 1–6 հատորները, որոնք ընդգրկում են մեծ երգահանի աշխարհիկ գործերը, լույս տեսան Ռ. Աթայանի խմբագրությամբ, իսկ 7–14 հատորները՝ Կոմիտասի հոգևոր ստեղծագործություններն ու ազգագրական ժառանգությունը, հրապարակ իջան առավելապես Գ. Գյոդակյանի ջանքերով:*

Դեռևս 1970-ական թվականներին Արվեստի ինստիտուտում սկիզբ առավ Կոմիտասի սան Մ. Թումաճանի «Հայրենի երգ ու բան» քառահատոր ժողովածուի հրատարակման կարևոր գործը. առաջին հատորը լույս տեսավ 1972-ին, իսկ չորրորդը՝ 2005-ին:

Հրատարակության են պատրաստ «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի (գլխավոր խմբագիր՝ Կ. Խուդաբաշյան) 10 հատորները: Վերջերս պետական պատվերի շրջանակներում ընթերցողներին հասավ մատենաշարի առաջին հատորը՝ «Հայ նվագարանային երաժշտություն. պարեղանակներ» (Երևան, 2008): Տպագրության են հանձնված հաջորդ երկու հատորները:

Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվում հայ ժողովրդական երաժշտության նմուշների հավաքման, համակարգման, վերծանման և ուսումնասիրության գործին: Իրականացվում են դրանց քարտավորման ու անձնագրավորման աշխատանքները: Ավանդական եղանակներով տարվող ուսումնասիրությունների կողքին, արդի երաժշտագիտական մտքին համընթաց՝ ինստիտուտի ֆոլկլորագետները ձեռնամուխ են եղել ժողովրդական երաժշտության համակարգչային բանկի ստեղծմանը: Այդ ծրագրի շրջանակներում ինստիտուտի ձայնադարանային ֆոնդի նյութը գրանցվում է համակարգչի հիշողության մեջ ըստ ժանրային, տարածքային, կատարողական, կառուցվածքային և անհրաժեշտ այլ տվյալների: Նշելի է, որ հայ ժողովրդական երաժշտության՝ հաշվիչ մեքենաների համար պատրաստվող քարտագրության հիմունքները դեռևս անցած դարի 70-ական թվականներին մշակել է այդ տարիներին Արվեստի ինստիտուտում աշխատող Վ. Գոշովսկին:

Դժվար է գերագնահատել Արվեստի ինստիտուտի ձայնադարանային ֆոնդի նշանակությունը. սա երաժշտական-բանահյուսական եզակի սկզբնաղբյուրի բացառիկ արժեք ունի: 1920-ական թվականներից մինչև մեր օրերը գրանցված գիտարշավային նյութերն ընդգրկում են ներկայիս Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը, Երևանը, ինչպես նաև Վրաստանի հարավային շրջաններն ու Թբիլիսին, Աբխազիան, Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի և Կրասնոդարի

երկրամասի հայաշատ վայրերը և այլն: Զայնադարանում առկա են նաև Արևմտյան Հայաստանից, արաբական և եվրոպական երկրներից հայրենիք ներգաղթած և այստեղ բնակություն հաստատած բանասացներից գրառված հազարավոր նմուշներ: Ժողովրդական երաժշտության գեղջկական, աշուղական, քաղաքային, նվագարանային և հոգևոր ճյուղերը ներկայացված են վիպական, ծիսական, կենցաղային, սիրային, աշխատանքային, երգիծական, պարերգային և այլ ժանրերում:

Թեև ինստիտուտի երաժշտագետների ձեռքբերումներն ակնհայտ են ու տպավորիչ, նույնքան շատ են այս ասպարեզում հետագա անելիքները: Անհրաժեշտ է առավել հանգամանորեն շարադրել հայ միջնադարյան երաժշտության պատմությունը, շարունակել դասականների (օրինակ՝ Տիգրան Չուխաճյանի) ստեղծագործական ժառանգության, նրանց երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակությունը: Օրակարգի հրատապ խնդիրներից են XX դարի հայ երաժշտության պատմության համապատկերի վերաստեղծումը, միջնադարյան երաժշտածիսական ժողովածուների և մասնագիտացված երգարվեստին առնչվող տեսական ու գեղագիտական մտքի հուշարձանների բազմակողմանի ուսումնասիրությունը:

Անցած հիսուն տարիների ընթացքում մեծ ու արգասավոր ուղի է անցել հայ թատերագիտությունը՝ փաստական նյութի կուտակումից դեպի արվեստագիտական ընդհանրացումներ, մենագրական աշխատություններից դեպի պատմության շարադրանք ու թատրոնի տեսություն: Գրվել են թատերագիտական բազմաբնույթ աշխատություններ: Հայ դերասաններ ու բեմադրիչներ Պ. Ադամյանին, Սիրանույշին, Հ. Աբելյանին, Մ. Մնակյանին, Ա. Արմենյանին, Վ. Վարդանյանին, Մ. Ջանանին, Հ. Ներսիսյանին, Ս. Քոչարյանին, Ա. Գուլակյանին, Վ. Ամեմյանին, Հ. Ղափլանյանին են նվիրված Ռ. Զարյանի, 1987-ին ինստիտուտի տնօրենի պաշտոնում նրան փոխարինած Լ. Հախվերդյանի, ապա նաև Գ. Ստեփանյանի, Ն. Մուրադյանի, Ս. Ռիզանի, Բ. Հարությունյանի, Հ. Հովհաննիսյանի, Ի. Բաբայանի մենագրությունները[28], որտեղ հավաքվել և համակարգվել են մեծաքանակ փաստական նյութ, լուսաբանվել թատրոնի պատմության հանգուցային մի շարք հարցեր՝ տեսական խնդիրների

[28] *Տե՛ս, օրինակ, Ռ. Զ ա ր յ ա ն. Թատերական դիմանկարներ, Երևան, 1956, ն ո ւ յ ն ի՝ Սիրանույշ (1857-1932), Երևան, 1957, Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն. Սուրեն Քոչարյանի արվեստը, Երևան, 1959, Ն. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Արմեն Արմենյան, 1959, Ռ. Զ ա ր յ ա ն. Ադամյան: Արվեստը, Երևան, 1960, Գ. Ս տ ե փ ա ն յ Մկրտիչ Ջանան, Երևան,1960, Ռ. Զ ա ր յ ա ն. Ադամյան, Երևան, 1961, Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն. Կլասիկան և մեր օրերը, Երևան, 1962, Ս. Ռ ի զ ա ն. Վավիկ Վարդանյան, Երևան, 1962, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Արմեն Գուլակյան, Երևան, 1964,* С. Р и з а е в. Рачия Нерсесян. М., 1968; *Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Մարտիրոս Մնակյան, Երևան, 1969, Ս. Ռ ի զ ա ն. Հրաչյա Ղափլանյան, Երևան, 1969, Ռ. Զ ա ր յ ա ն. Վահրամ Փափազյան, Երևան, 1972, Ս. Ռ ի զ ա ն. Վարդան Ամեմյան, Երևան, 1972, Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն. Դերեր և դերասաններ, Երևան, 1977, ն ո ւ յ ն ի՝ Բեմադրիչներ և բեմադրություններ, Երևան, 1983, Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Թատրոն. հին և նոր արժեքներ. Հոդվածներ, Երևան, 1986, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հովհաննես Աբելյան. Կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1865–1936), Երևան, 1987, Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն. Տաղանդ և բնավորություն (Վարդան Ամեմյանը կյանքում և արվեստում), Երևան, 1989, Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Թատրոն և թատերախոսություն, Երևան, 2004, Ի. Բ ա բ ա յ ա ն. Վարագույրի ետևում, Երևան, 2006, ն ո ւ յ ն ի՝ Վարդան Ամեմյանի աշխարհը վավերագրերում /1905-1977/, Երևան, 2006:*

հետ ունեցած սերտ կապի մեջ: Հայկական բեմանկարչության ամփոփ պատկերն է տվել Լ. Խալաթյանը[29]:

Ստեղծվում են ընդհանրացնող մի շարք աշխատություններ: Հ. Հովհաննիսյանի գրքերում և հոդվածներում գիտական ամուր հիմքերի վրա է դրվել հայ հին և միջնադարյան թատրոնի ուսումնասիրման գործը[30], արծարծվել են բեմական խոսքին ու դերասանի արվեստին վերաբերող տեսական-գեղագիտական հրատապ խնդիրներ[31]: Կիլիկյան Հայաստանի թատրոնին է վերաբերում Գ. Օրդոյանի մենագրությունը[32]:

XIX դարի և XX դարասկզբի ազգային թատրոնի և թատերագիտական մտքի պատմությանը նվիրված Լ. Հախվերդյանի և Հ. Հովհաննիսյանի հիմնարար հետազոտություններն առանձնանում են մասնագիտական հստակ վերլուծումներով, ներկայացվող նյութի նորությամբ ու լայն ընդգրկումով[33]: Լ. Հախվերդյանի «Հայ թատրոնի պատմություն. 1901-1920» (Երևան, 1980) գիրքն 1983-ին արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Գ. Ստեփանյանի եռահատոր աշխատության մեջ մանրամասն լուսաբանվում է արևմտահայ թատրոնի պատմությունը[34], իսկ Վ. Թերզիբաշյանի «Հայ դրամատուրգիայի պատմություն» (Երևան, 1959, 1964) երկհատորյակի էջերում արտացոլվել են արևելահայ թատրոնի պատմության հանգուցային հարցերը: Հայկական բեմադրական արվեստի պատմությունը հանգամանորեն դիտարկել է Ս. Ռիզանը[35]:

Մեծ տեղ է հատկացվել արդի հայ թատրոնին առնչվող խնդիրների ուսումնասիրությանը. կատարված հետազոտությունների առկայությունը հնարավորություն ընձեռեց լույս ընծայել «Հայ սովետական թատրոնի պատմություն» (Երևան, 1967) կոլեկտիվ աշխատությունը:

Հայ թատերագիտության նվաճումը դարձավ Բ. Հարությունյանի կազմած՝ XIX–XX դարերի ազգային թատրոնի պատմության տարեգրությունը, որն ընդգրկում է 1801–1960 թվականները[36]: Հարությունյանի տքնաջան գործը շարունակում է Ս. Չթյանը՝ հայ թատրոնի պատմության տարեգրությունը հասցնելով մինչև XX դա-

---

[29] *Տե՛ս Լ. Խ ա լ ա թ յ ա ն. Սարյանը և թատրոնը, Երևան, 1960, ն ո ւ յ ն ի՝ Թատերական նկարիչների մասին, Երևան, 1983, ն ո ւ յ ն ի՝ Վախթանգով, Յակուլով և ուրիշներ, Երևան, 1984:*

[30] *Տե՛ս Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Թատրոնը միջնադարյան Հայաստանում: Պատմության և տեսության հարցեր, Երևան, 1978, ն ո ւ յ ն ի՝ Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, 1990, ն ո ւ յ ն ի՝ Միջնադարյան բեմ. թատրոն-եկեղեցի հարաբերությունը և հայ հոգևոր դրաման, Երևան, 2004:*

[31] *Տե՛ս Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Բեմական խոսքի պոետիկան, Երևան, 1973, ն ո ւ յ ն ի՝ Դերասանի արվեստի բնույթը: Էսթետիկական քննություն, Երևան, 2002:*

[32] *Տե՛ս Գ. Օ ր դ ո յ ա ն. Թատրոնը Կիլիկյան Հայաստանում XII-XIII դդ., Երևան, 1990:*

[33] *Տ ե՛ս Լ. Հ ա խ վ ե ր դ յ ա ն. Հայ թատրոնի պատմություն (1901-1920), Երևան, 1980, Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Երևան, 1996:*

[34] *Տե՛ս Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Երևան, հ. 1, 1962, հ. 2, 1969, հ. 3, 1975:*

[35] *Տե՛ս* С. Р и з а е в. Режиссура в армянском театре. Ереван, 1968.

[36] *Տե՛ս Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Սովետահայ թատրոնի տարեգրություն (1917-1960), Երևան, գիրք 1, 1961, գիրք 2, 1969, ն ո ւ յ ն ի՝ XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն (1801–1922), Երևան, հ. 1, 1980, հ. 2, 1980, հ. 3, 1981:*

բավերջ:

Թատերագիտության ուրույն ճյուղն է սփյուռքահայ թատրոնի ուսումնասիրությունը, որի ուղղությամբ առաջին լուրջ քայլը «Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության» շարքից 1982-ին լույս տեսած Գառնիկ Ստեփանյանի անդրանիկ գիրքն է՝ նվիրված ֆրանսահայ թատրոնին: Ա. Չթյանն ավարտել է եգիպտահայ թատրոնի պատմությունն ու ձեռնամուխ եղել իրանահայ թատրոնի պատմության ուսումնասիրմանը:

Արվեստի ինստիտուտին առընթեր Շեքսպիրագիտության հայկական կենտրոնի կազմակերպումից հետո (1966) Ռ. Զարյանի ղեկավարությամբ լրջորեն սկսեցին ուսումնասիրվել մեզանում Շեքսպիրի ստեղծագործական ժառանգության յուրացման խնդիրները: Կենտրոնի նպատակներից էր՝ ամբողջացնել շեքսպիրյան երկերի հայերեն թարգմանությունները, նախապատրաստել ու հրատարակության հանձնել դրանց լիարժեք ժողովածուն: Պարբերաբար հրատարակվող «Շեքսպիրական» մատենաշարի էջերում լուսաբանվել են «Շեքսպիրը և հայ հասարակական միտքը», «Շեքսպիրյան թարգմանությունների պատմությունը», «Շեքսպիրյան պիեսների բեմական կյանքը հայ թատրոնում» և բազմաթիվ այլ թեմաներ: Կենտրոնին կից 1964-ին՝ Շեքսպիրի ծննդյան 400-ամյա հոբելյանի առիթով ստեղծված, իր բնույթով եզակի, այսօր Ռ. Զարյանի անունը կրող Շեքսպիրագիտական գրադարանում հավաքված են ավելի քան 3000 գրքեր՝ աշխարհի 36 լեզուներով: Կենտրոնի և գրադարանի ստեղծման, ինչպես նաև հայկական շեքսպիրագիտության կարևոր պրոբլեմների մշակման գործում անգնահատելի է Ռ. Զարյանի վաստակը. նրա «Էջեր հայկական շեքսպիրապատումից» երկհատորյակը (Երևան, 1979, 1981) 1981-ին արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Ինստիտուտի հիմնարկման օրից թատրոնի բաժնում ստեղծվեց փոքրաթիվ կինոխումբ (ղեկավար՝ Ս. Ռիզան): Հայ կինոյի պատմության և տեսության հարցերն էին շոշափում «Հայկական կինոարվեստը» (Երևան, 1958, 1960) վերնագրով կինոգիտական հոդվածների ժողովածուները: Աշխատանքներ են տարվել հայ կինոյի տարեգրության, ֆիլմագրության և մատենագրության ստեղծման ուղղությամբ, մշակվել են կինոգիտության մի շարք խնդիրներ[37]*, կազմակերպվել տեսական կոնֆերանսներ ու գիտաժողովներ: Հայկական կինոյի ուսումնասիրման բնագավառում նկատելի ձեռքբերումներեն Ս. Ռիզանի* “Армянская художественная кинематография” (Ереван,1963), *Գ. Զաքոյանի*“Армянскоенемое кино” (Ереван, 1976), *Կ. Քալանթարի* “Актер в армянском кино. Концепция фильма иактерский образ” (Ереван, 1982) *աշխատությունները և վերջինիս* “Очерки

[37] *Տե՛ս, օրինակ,* Проблемы кино и телевидения. Вып. 1, 2. Ереван, 1980, 1984; Г. З а к о я н. Язык и кино. Ереван, 1989.

историиармянского кино” (Ереван, 2004, 2008) *երկհատորյակը, կինոռեժիսորներ Հ. Բեկ-Նազարյանի, Ս. Փարաջանովի, Հ. Մալյանի, Ա. Մանարյանի մասին մենագրությունները*[38]*:*

Այսպիսով՝ անցած հիսուն տարիների ընթացքում Արվեստի ինստիտուտում մեծ աշխատանք է կատարվել: Սակայն առջևում դեռևս շատ անելիքներ կան, որոնցից նշեմ մի քանիսը:

Ժամանակին ինստիտուտի կազմում գործել է սփյուռքահայ արվեստի բաժինը, որը ղեկավարել է Գ. Ստեփանյանը: Հետագայում բաժինը փակվել է և, բնականաբար, կտրուկ նվազել է սփյուռքահայ արվեստով զբաղվող մասնագետների թիվը: Այսօր, երբ մշակութային սերտ կապեր են հաստատվում Մայր հայրենիքի և Սփյուռքի միջև, առավել քան սուր է գիտակցվում նաև սփյուռքահայ արվեստի հետևողական ու նպատակամետ ուսումնասիրման, գիտական իմաստավորման անհրաժեշտությունը: Եվ այդ առումով արդեն հուսադրող քայլերն են արվել. վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և ՀՀ Սփյուռքի նախարարության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել Արվեստի ինստիտուտում սփյուռքահայ արվեստի բաժնի վերաբացման ուղղությամբ:

Ներկայումս ինստիտուտում չկա կինոյի բաժին: Կինոյի և հեռուստատեսության գծով կադրերի պատրաստումն ու մոտ ապագայում համապատասխան բաժնի կամ թեկուզ խմբի վերստեղծումը ևս ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից է:

Գիտական բազմակողմանի հետազոտության կարոտ ասպարեզներից է նաև հայկական պարարվեստը, մինչդեռ ինստիտուտում ունենք պարագիտության ընդամենը մեկ մասնագետ:

Ծրագրված է հայ գեղարվեստական մշակույթի պատմական զարգացման համալիր ուսումնասիրության շրջանակներում առաջին անգամ շարադրել ազգային գեղարվեստական մշակույթի համադրական պատմությունը՝ ընդգրկելով հայ արվեստի բոլոր ճյուղերը:

Նախատեսում ենք հիմնարար հետազոտություններ կատարել հայ արվեստաբանության և քննադատական մտքի պատմության բնագավառում, արվեստին նվիրված տերմինաբանական բառարանների և հանրագիտարանի ստեղծման միջոցով նպաստել մասնագիտական հայածին բառամթերքի հարստացմանն ու հստակեցմանը:

Անհրաժեշտաբար հակիրճ հաղորդման մեջ հնարավոր չէ մանրամասնորեն ներկայացնել Արվեստի ինստիտուտի կեսդարյա պատմությունն ու նրա հետագա անելիքները: Դա մի առանձին՝ ստվար գրքի նյութ է:

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

---

[38] *Տե՛ս* К. К а л а н т а р. Амо Бек-Назаров. Искусство кинорежиссера. Ереван, 1973; *Ն ո ւ յ ն ի՝* Очерки о Параджанове. Ереван, 1998; *ն ո ւ յ ն ի՝* Верный божеству искусства (о Генрихе Маляне). Ереван, 2000; *ն ո ւ յ ն ի՝* Обаяние национального кино (очерки о творчестве Армана Манаряна). Ереван, 2007.